



2015 թվականի սեպտեմբերի 3-ին CCMS-ի գրասենյակում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Սադրուի և Երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսական աջակցությամբ իրականացվող « Զարգացման խաչմերուկ » ծրագրի մեկնարկ - շնորհանդեսը , որին մասնակցեցին ՀՀ Լուու մարգակետարանի ՏԻՄ և ՀԳՄ վարչության առաջին կարգի մասնագետ Ա. Շախվերդյանը, Աքրրու համայնքապետ Հ. Սինոնյանը, Արևածագի համայնքապետ Ս. Սարգսյանը, Քարինջի համայնքապետ Ն. Մկրտումյանը, Ավավերդու և Ճոճկանի համայնքապետարանի ներկայացուցիչներ, տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ակտիվ երիտասարդներ, « Անկյուն+3 » ՀԸ լրագրողներ:

CCMS-ի տնօրեն Օ. Դուլգարյանը ներկայացրեց « Զարգացման խաչմերուկ » ծրագրի նպատակը, ակնկալվող արդյունքները , նախատեսվող գործողություններն

ու դրանց բովանդակությունը: « Զարգացման խաչմերուկ » ծրագրի նպատակն է` ՀՀ Լուու մարգի, Ավավերդի, Ճոճկան, Աքրի, Արևածագ և Քարինջ համայնքներում խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման և համայնքային զարգացման գործընթացներում: Ծրագրի շրջանակներում շահառու համայնքներում կստեղծվեն ԵԿԱ (երիտասարդ կամավորների ակումբ) ոչ ֆորմալ երիտասարդական քաղաքացիական խմբեր , որոնց անդամները կանցնեն վերապատրաստումների շարք` « Կարիքների գնահատում » , « Մոնիտորինգի և շահերի պաշտպանության գործիքներ » , « Համայնքային մոբիլիզացում » , « Կամավորություն » , « ՏԻՄ օրենսդրություն մասնակցային բյուջետավորում և պլանավորում » , « Ծրագիր առաջարկի կազմում և ֆոնդիայթայթում » թեմաներով , որից հետո ԵԿԱ անդամները կներգրավվեն համայնքում պրակտիկ աշխատանքներին և նախաձեռնություններին:

Ծրագրից ակնկալվում է, որ համայնքներում ձևավորված կլինեն ԵԿԱ-ներ, որոնց անդամները ներգրավված են համայնքի կարիքները գնահատման և զարգացման ծրագրերի մշակման , ֆոնդահայթայթման , համայնքային նախաձեռնությունների իրականացման, համայնքային խնդիրների հանրայնացման գործընթացներում: ՏԻՄ-րի հետ համատեղ կվերանայեն համայնքների քառամյա զարգացման ծրագրերը, դրանց մեջ ներառված խնդիրների առաջնայնությունները , կկազմակերպեն շահառու համայնքների 2016 թվականի բյուջեների նախագծերի մշակման աշխատանքները, և դրանց մեջ կապահովեն համայնքային առաջնայնությունների ֆինանսական արտացոլումը:

Ծրագիրը կիրականացվի 2015 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում:

Ներկաները ողջունեցին ծրագրի գաղափարը, կարևորեցին անհրաժեշտությունը, ուղղեցին հարցեր կապված ծրագրային գործողությունների կազմակերպման ձևաչափի և ժամկետների հետ, ինչպես նաև հայտնեցին իրենց պատրաստակամությունը աջակցել ծրագրի իրականացման գործողություններին և համագործակցել CCMS-ի և ԵԿԱ-ների հետ:

Շնորհանդեսի ավարտին CCMS-տնօրեն Օ. Դուլգարյանը ներկայացրեց ՀՀ Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարության cragr.am առցանց դրամաշնորհային համակարգը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1693-Ն որոշմամբ հաստատված «2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության» գերակայությունները, որոնց պետք է համապատասխանեն առցանց դրամաշնորհային համակարգով ներկայացվող ծրագրերը:

« Զարգացման Խաչմերուկ » ծրագիրը իրականացվում է CCMS-ի («Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն » ՀԿ) կողմից , Հայաստանի Հանրապետության Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսական աջակցությամբ, « Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն » ՊՈԱԿ միջնորդությամբ:

